ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. ապրիլի 18-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **16.04.2023թ-ի «Իջևան-07»-«Կիլիկիա-07» (16B-044) 1) «Կիլիկիա-07» թիմի մարզիչ Մակիչ Բզնունու (11541) կողմից մրցավարի կայացրած որոշման նկատմամբ կրկնակի անգամ անհամաձայնություն հայտնելու և վերջինիս հեռացվելու արդյունքում խաղի չշարունակվելը, 2) «Կիլիկիա-07» թիմի ֆուտբոլիստ Գառնիկ Բաղդասարյանի (42291) կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Կիլիկա-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոցին տուգանել նվազագույն աշխատավարձի

քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով և «Կիլիկա-07» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

2) Հաստատված համարել «Կիլիկիա-07» թիմի ֆուտբոլիստ Գառնիկ Բաղդասարյանի (42291) կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և Երանոսի թիվ 1 միջնակարգ դպրոցին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով: